

ԲԵՃՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Անցած. 67

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԿԼԵՆԻՍԻ



ՊԵՏԱՐԱՆ

Գրութիւնք ետ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 23 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 216

Ա Ջ Դ

Մի անգամ ընդ միշտ կը յայտարարենք մեր բաժանորդներուն, բաժանորդ գրութիւն ուղղորդենք ինքն ինքն զործակալներուն թէ

1. Գրամը մինչև որ չտանանք, բաժանորդ չենք գրեր ոչ մէկ տեղի համար.

2. Պայմանաժամին, օրը օրին պիտի դադարեցնենք, եթէ նոր բաժնեգիրն կանխաւ ընդունած չըլլանք, կամ եթէ մէկը ցուցում չըլլայ ոսկից գանձուի: Տպագրական բոլոր ծախքերը կանխիկ ըլլալուն, բաժնեգիրն ալ պէտք է կանխիկ ըլլայ:

3. Յուլիս մէկին պիտի հրատարակենք այն կարգ մը քարտիսիդ բաժանորդաց անունները, որոնք հակառակ մեր այնչափ խնդրանաց մինչև այն օրը չի փութան վճարել իրենց պարտքը:

ԿՐՕՆՔԻ ԴԱՍԸ

Մեր վերջին թուով, մէկ քանի անձերու փափագին համեմատ կը հարցունէինք տեղւոյս ազգ. վարժարանի տնօրէնին թէ իրօք կրօնքի դասը վերցուած է յիշեալ վարժարանէն:

Իրդ. Պ. Տնօրէնը պատասխանեց մեզ — և իր պատասխանը փաստացի կերպով ալ հաստատեց — թէ ինք ժամանակին հոգաբարձութեան ուղարկութիւնը հրաւիրած էր կրօնքի դասին պակասութեանը վրայ, բայց թէ հոգաբարձութիւնը այս պակասը լրացնելու համար ու է միջոց ձեռք չէր առած. այսինքն չէր յօժարած գոնէ 20—30 ֆրանք տալ տեղւոյ քահանայներէն մէկուն՝ կրօնագիտութեան աւանդման հարար:

Ապահովապէս առաջին անգամն է որ այսօրինակ նորութեան մը առջև կը գտնանք ինքզինքնիս: Անյիշատակ ժամանակներէ ի վեր հայկրթական հաստատութեանց մէջ կրօնքի ուսուցումը կարեւորագոյն տեղ մը բռնած է միշտ, մանաւանդ յորմէ հետէ քաղաքական ազգ մը ըլլալէ դադարելով կրօնական ազգ մը կը ներկայացնենք: Աւանդութենէ մնացած բաներ կան որոնք իրենց հանդամանքին նուիրականութեանը պատճառով լակ. երբէք չեն կրնար ռոքի կոխան ըլլալ, անոնք որքան ալ անհաշտ կամ անտեղի երևնան կարգ մը նորահաս մտքերու ուղղութեան: Հայ մանուկը դպրոցին մէջ պէտք է որ իր կրօնքին նախատարբերքը սորվի. ասիկա անհրաժեշտ է. և ասոր անհրաժեշտութեանը ամենէն աւելի նոյն իսկ մեր ուսուցիչները համոզուած ըլլալու են: Մեր մանուկներուն կըրթութեան բուն իսկական գործառնորը հոգաբարձուն չէ, այլ ուսուցիչը, որուն խղճին և ուսին վրայ կը ծանրանայ ամեն բարոյական պատասխանատուութիւն:

Սակայն ներկայ պարագային մէջ ուսուցիչը մինչև մէկ աստիճան կրնայ ինքզինքը չքմեղացած համարել, քանի որ նիւթական պատասխանատուութիւնը հոգաբարձութեան վրայ միայն կը ծանրանայ: 20—30 ֆրանքի չնչին գումար մը խնայելու ճշմարտ պատուովով հայուսանողութիւն մը զրկել հարկաւոր եղած դատաւանդութենէ մը, ասիկա իսկապէս անհաւատարի է: Կերեայ որ մեր հոգաբարձուները շատ յարաբերական հոգածութիւն մը ունին ազգին կողմէ իրենց յանձնուած կրթական յարկին մասին:

Ինչ և իցէ, քանի որ հիմա կրթական այս զանցառութեան բուն պատասխանատուները ճանչցուեցան, կը սիրենք յուսալ թէ յետ այսօրիկ մեր ներկայ կամ ապագայ հոգաբարձութիւնն է:

ըը Բող պիտի տանին բարարութիւն տալ այն պիտի պէտքի մը, որուն պակասութիւնը մեր ժողովուրդին զգացումները ամենէն աւելի ցնցելու հանգամանքը ունի:

ԱՉԳԱՅԻՅԵ



Միհրան էֆ. Գարակէօղեան իր ախուսութեանն առթիւ 50 ծրար (40 եարտանոց) քապօթ և 50 հատ ֆանէլա վերմակ նուիրած է Ազգ. Հիւանդանոցի:

—Տիգրանակերտի Սաթ գիւղին մէջ վարժարան մը պիտի բացուի յանուն Նաղարեան Տիրանի որ յանձն առած է տարեկան 12 ոսկիի նպաստ մը տալ: Գարձեալ Քէմախի Գոմէշ գիւղին մէջ Նախակրթարան մը պիտի բացուի յանուն Յակոբ Գորեանի որ յանձն առեր է տարեկան 12 ոսկի տալ:

—Բանասէրի տնօրէնին գիտական ուղևորութիւնը կը սկսի իր արդիւնքը ցուցնել: Պ. Պասմաճեան ֆրանսական հանդէսի մը մէջ կարևոր ուսումնասիրութիւն մը հրատարակած է ի մասին Ռուզան թագաւորին 47 տողէ բաղկացած մէկ արձանագրութեանը, զոր մեր գլխուն պաշտօնակիցը երևան հանած է Զուարթնոց մայր եկեղեցիին աւերակներուն մէջէն և լուծած է զայն:

—Հանգուցեալ Նուպար բաշայի յիշագրութիւնները, որոնք կարևոր յայտնութիւններ կը պարունակեն Եգիպտոսի և Արևելեան խնդրին վրայ, պիտի հրատարակուին քանի մը ամսէն, յառաջաբանով մը զոր գրած է ֆրանսական ակադեմիի անդամ Պ. Էմիլ Օլիվիէ:

Հետեւեալ երկնորդին հրատարակութիւնը խընդրուած է մեզմէ:

«Երկուշաբթի օրը ժամը 2 ուկէսին զոհողութիւն մը ընկերոջ տեղոյս ազգ. վարժարանը գացի քննութեանց ներկայ գտնուելու համար, սակայն վարժարանը մարդ չի կար գաստաւոր իրենք Կոնողութիւն մը ընկերոջ հարսնիք գացեր էին»:

Գ. Մ.

ՆԱՄԱԿ ԻՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարկազ 12 Յունիս

Հնչակեան օրկանին (Բոժոժիկ. — Օրկան թէ Աննեմ Չտամեանութիւնը ծածկելիք եօթկան) վերջին թիւին մէջ «Նամակ Պարկազից» վերնագրով յօդուածի մը մէջ կարգացի ինձ ուղղեալ քանի մը տողեր:

Իբրև քահանայ և հոգևոր հովիւ, պարտականութեանս մէջ չը թերանալու համար, կիրակի օրերը եկեղեցւոյ բեմէն կը խրատեմ ժողովուրդը որ վերջ տայ անձնական կոիւնքու և գլուշանայ նաև կարգ մը խաչագող բաղդախնդիրներէ որոնք ժողովուրդին մէջ սպըրգելով յեղափոխութեան սուրբ անունը կը շահագործեն: Այսպիսիները իրենց կեդրոնավայր ընտրած են Պարկազը, վասն զի երբ տեղային կառավարութիւններէն կամ ժողովուրդէն կը հալածուին, ազատ շունչերնին Պարկազ կառնեն, ու մէկ մէկ անպարտիկ հերոսներ դարձած պարզ բնականիւր դասակարգին մէջ բաժանուածնէր առաջ կը բերեն: Այլևս անկարելի է զանոնք սոսնձահարկ խումբեր կը կազմեն, յարձակումներ կընեն դպրոցի և թաղական խորհուրդի վրայ, սպանական անստորագիր նամակներով տեղափոխելով թանկարկներ, բանկային ապահիները կը կոտորեն, ազդարարութիւնները կը պատռեն և այլն: Ասոնց պարագլուխներն են Արմէն Շիտան որ Էտիրնէ, Ֆիլիպէ, Պարկազ հանրածանօթ է իր վատ արարքներով, վառնայի նախկին գաստաու և հաշակաւոր Պ. Ե. որ վառնայի կառավարութեան կողմէ երեք տարի շղթայակապ բանտարկութեան գատապարտուեցաւ, Այս երկուքը Հնչակեան կառավարութեան խմբապետ Պ. Ղազարին հետ միանալով սկսան տեսակ տեսակ անուններու տակ շահագործել ժողովուրդը: Այսօրինակ խընդիրներու ակնատես ըլլալով պարտականութիւն համարեցի եկեղեցւոյ բեմէն հետեւեալը խօսիլ ժողովուրդին:

«Յեղափոխութիւնը Սուրբ և Նուիրական գործ մըն է մեզի համար. ամէն ստրուկ ազգ այս ճամբով կըցած է իր ազատութիւնը ձեռք բերել. ուստի մենք ալ միանալով բաջալերենք ճշմարիտ յեղափոխականները և մեր հայրենիքի փրկութեան համար աշխատինք: Սակայն այս վերջին տարիներու ընթացքին մէջ շատ մը բաղդախնդիրներ գուրս եկան, որոնք ամէն նենդութիւն ի գործ դնելով ժողովուրդը կողոպտեցին ու դեռ կը կողոպտեն, ուստի չի խաբուինք անոնց և ջախջախենք ատանկ վատերը»:

Այս ծանուցումս մեր խաչագող հերոս եղբայրներուն գործին չի գալով, կերթան սրճարանները ու կըր

են. «Գուրկալի բաճանձան է (*), կառավարութեան մասնէն է: Բայց զո՞վ. հանրածանօթ շիտանը, հռչակաւոր երուանդը: Երբ կամ ո՞ր ժամանակ թուրք քոնսլիին գացած եմ. երբ քանի մը մարդոց քաղաքէս արքորուիլը պահանջած եմ կառավարութենէն, ինչո՞վ կրնաք հաստատել իմ փորձաւոր, բնական ըլլաւ: Հրամանէք սպարէզ եւ հաստատեցէք: Ապա թէ ոչ զձեզ, ձեր պարագլուխներով լիրբ, ժպիրհ, խաշագող եւ դաւաճան պիտի ճանչնամ, եւ ամէն տեղ պիտի ջանամ զգուշացնել ժողովուրդը ձեր շահատակութիւններէն:

Ձեզի ամիս մը պայմանաժամ կուտամ, որպէս զի տեղւոյս վրայ քննութիւն մը կատարէք եւ ստուգութիւնը հասարակութեան աւջեւ պարզէք:

Տ. Կարապէտ ֆհնյ. Սահակեան

(*) Բոժ. — «Դաւաճան» ու «մասնիչ» բառերու գործածութիւնը ալ ընդհանրացաւ. «Ծօ» խերդ անիծեմ»-ին պէս բան մը եղաւ. գինեպան Ղազարն անգամ իր սրգոյցուցած յաճախորդին՝ «Դուն դաւաճան ես, դուն մասնիչ ես որ խանութէս ոտքդ կտրեցիր» կըսէ կոր:

ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

... Խմբագիր

Ներփակեալ շրջաբերական կոչը (*) զոր կը զրկենք Ձեզ խնդրելով որ հաճիք հրատարակել զայն Ձեր թերթին յառաջիկայ թուին մէջ, միանգամայն գոյութեան յայտարարութիւնն է մարմնի մը որ անշուշտ իր նմանները պիտի ունենայ քիչ օրէն ուրիշ քաղաքներու մէջ ալ:

Հայութեան ներկայ միակ նպատակին՝ ազատութեան համար անվիճելի անհրաժեշտութիւն մը դարձած գաղափար մը, ինչպիսին է միութեան գաղափարը, արդէն հետզհետէ զգալի դարձած է մեր ժողովուրդին մէջ եւ անոր գործադրութիւնը անհետաձգելի:

Մեր նպատակն է զօրաւոր մղում մը տալ այս գիտակցութեան եւ այս համոզումին յարած ժողովուրդը կազմակերպուած վիճակի մը մէջ դնելով աշխատիլ իրադարձելու մեր բուն նպատակը, որ միմիայն մեր յեղափոխական մարմիններու ուժերուն (Միմիութեան եւ գործունէութեանց համերաշխութեան մէջ կը կայանայ:

(*) Տեղւոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թերթով պիտի հրատարակենք:

Ծ. Խ.

Հետեւաբար բոլորովին հեռու ենք նոր կուսակցութիւն մը հիմնելու ՅԱԼԱԿՆՈՏՈՒԹԻՒՆՆ ու ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ունենալէ, որ ամենէն ցնդրականը պիտի ըլլար մեր ներկայ ճգնաժամին եւ հակադրու ոյժ մը թերեւ հայութեան ընդհանուր նպատակին ազատութեան իրադարձմանը հանդէպ (*):

Եւ որպէսզի գործը ակամայ այս ձեւը չստանայ մեզի սկզբունք ընտրած ենք երբեք չմիջամտել անցեալի կուսակցական վէճերուն, մոռնալ մեր անցեալ կուսակցական հակումները եւ մեր բոլոր հայեցողութիւնները, բոլոր հակումները երկու գաղափարներու մէջ մարմնաւորել — Յեղափոխութեան եւ Միութեան:

Այս նպատակի իրադարձման հետ կը վերջանայ եւ գոյութիւնը մեր կազմակերպութեան, զոր այս նկատումով «Յանձնաժողով» ենք կոչած:

Արդ բաւական համարելով առ այժմ այս քանի մը զլլաւոր տեղեկութիւնները մեր կազմակերպութեան մասին, կը յուսանք, Ձեր անկեղծութեան եւ խմբագրական անաչառութեան վրայ վստահ, որ չպիտի հրաժարիք ներփակեալ կոչը Ձեր թերթին մէջ հրատարակելէ որուն համար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Ի Դիմաց

Հայ. Յեղ. Միութեան Ռուսոճուքի Յանձնաժողովին
Դարտուղար Նախագահ
Ահարոն Արամայիս
Մէյմէկ օրինակ ալ շրջաւորած է «Իրաւունք»-ի եւ «Շարժում»-ի:

(*) Այս տողերը՝ սպառնալիքով եւ դաշոյնով Միութիւն յառաջ բերել երազող կարգ մը անխորհուրդներուն ուշադրութեանը կը յանձնենք: Ծ. Խ.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Քամալթաքա

Վարժարանիս տնօրէնը թեթեւ յանգիմանութիւն մը լսեց. քննութեանց ցանկին մէջ կրօնագիտութեան դաս տրուիլը գոնէ «սուրէթի շէրի օլուն» գրուած չըլլալուն համար:

Աւիցա Բօթ Բօթ

Ժախնակէն առաջ շրջանաւարտ ելած վարժարանիս բարեհամբաւ տնտեսագետ տնօրէնը՝ թոկոջով զանեքու (կոչնագիր) տեղատարակէն ազատուելու համար հինգշաբթի օրը կծկը դրաւ:

ՍԱԼՈՆԻ ԿԵԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶԱԽԵՇՏ ՄԸ

Բամպակեան.—50 սարեկան

Տկն. Բամպակեան.—Իր կինը, 45 սարեկան

Մառի.—Իրենց աղջիկը, 20 սարեկան

(Համեստորէն կահաւորուած պզտիկ սալօնի մը մէջ, Բամպակեան եւ իր կինը, հագուած, զարգարուած կտաւաններ հարստարդի մը որ պիտի գայ իրենց աղջիկը տեսնելու անպաշտօն կերպով: Էրիկ—կնիկ գոհ գէտք մը ունին և ամէն միջոց ձեռք առած են լաւ տըպաւորութիւն մ'ընելու համար փեսացունին վրայ):

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Բամպակեան, Տիկին Բամպակեան

Բամպակեան.—(Սենեկին մէջ պստած առնկ կենացով յանկարծ եւ ժաւացոյցը նայելով) Էհ, ժամը ութնին մօտեցեր է. ուր է նէ, կուգայ հիմա.

Տիկին.—Ժամը ճիշտ ութնին պիտի գայ որ:

—Ութնին, ութնուկէսին, անանկ ըսաւ, և կարծեմ թէ ճիշտ ատենին կուգայ:

—Քանի որ կըսես թէ Եւրոպա ապրած է սարիներով:

—Հարկաւ, տեսնես ի՞նչ շնորհքով, ի՞նչ սիրուն տղայ է. չես ըսեր որ հայ է. գաղղիներէն մը կը խօսի որ. մտիկ ըրած ատենդ բերնիդ ջուրերը կը վազէ:

—Ի՞նչ է գործը. բան մը չըսիր. զէվզէկին մէկը չըլլայ:

—Զէվզէկ մի. ի՞նչ կըսես. դուն ատանկ տըղայ չես ճանչցած կեանքիդ մէջ. այնքան քիպար է որ. կտաւանները, եղբորնուն պէս կը սիրեն տղան. ամբողջ գործը իր ձեռքն է գրեթէ. փիացային վրայ սանկ մատով կը ցուցնեն զինքը:

—Ըսել է որ ամսականն ալ տեղն է. տասնըհինգ քսան ոսկի մը կառնէ հարկաւ:

—Պելքի ալ առելի. բացէն ալ բարա ունի. կարծեմ հարկը մէկ քանի հազար ոսկի ժառանգ ձգեց:

—Ի՞նչ կըլլայ. ամենքն ալ կերած է անշուշտ. ասդին անդին. հիմակուան ճահիլները:

—Վախնամ որ Մառին հաւնի նէ չիտոս:

—Կեցիր նայինք. մէյմը տեսնանք սրվոր երեսը. գիտես եա, Մառին ամէն մարդու չհաւնիր. կը վախնամ որ.

—Պարապ խօսքեր են ատոնք. ընդհակառակըն ես կը վախնամ որ.

—Գոնէ դուն մ'ըսեր այդ խօսքը:

—Ի՞նչ գիտնամ. տղուն երեսը չտեսած դատելու կելլաս:

—Մէկ քանի հատը ճանչցանք իշթէ.

—Ան քու գիտցած երիտասարդներէդ չէ... քիպարութիւնը վրայէն սանկ տամալ տամալ կը կաթէ. անցեալ օր կամուրջին վրայ գլխարկը տէյօր վար բայաւ. հըմ. հիմակուան տղաքները բարեւ մը տալ անգամ չիտեն. (ժամացոյցը նայելով) օ՛ օ՛ օ՛. ութնին քառորդ կայ. ա՛ն չէ ամա, ամէն բան պատրաստած ես:

—Անուշին թախըմը չտկած հմ. վարդի չէվիրմէ մը որ. երէկ եփեցր.

—Աղէկ, աղէկ. էյ ո՞վ պիտի հրամցունէ.

—Մառին. անոր կը վայլէ:

—Աղէկ էյ, փաղցին դուռը ո՞վ պիտի բանայ.

—Մաննիկը պիտի գայ. չամաչըրճիլն աղջիկը բայց մինչեւ հիմայ չերեւցաւ անպիտանը.

—Տեսա՞ր մի եա, է, չատ աղէկ, եթէ չի գալու ըլլայ.

—Զիրնար ըլլալ. անպատճառ պիտի գայ. խօսք տուաւ. բրօթէլան անգամ պատրաստ է:

—Վախնամ քեբալէ պիտի ըլլանք տղուն քով. մինչեւ հիմա հոս ըլլալու էր աղջիկը.

—Մերաք մըներ, ճանրմ. հինգ վայրկեան առաջ գայ նէ կըլլայ.

—Սիրտս կը հատնի կոր. կուզեմ որ դուռը բացող մը ըլլայ:

—Հարկաւ, ո՞վ պիտի բանայ մեր մէջէն.

—Ըլլալիք բան չէ. պատիւս մէկ բարայի կըլլայ:

—Անպիտան աղջիկ. չի գալը բռնեց. հեմ ալ տեսնաւ ի՞նչ աղջիկ. սպասուհի է չես ըսեր. գաղղիներէն մը կը խօսի որ.

—Աֆէրիմ. իմ ուղածս ալ ատ է. վերջապէս գիտես, անուշիկս. անանկ գիրքմը առնելու ենք որ տղան յուսախաբ չըլլայ:

—Մի վախնար, պզտիկ չեմ ձգեր քեզ.

—Եւրոպացիի մը պէս ընդունինք զինքը. նայէ որ չիք ցուցնես ինքզինքդ. կարելի եղածին չափ քիչ խօսէ. քիչ խնդայ. Մառին ալ ըսելու է որ ճահիլի բաներ չընէ.

—Հարկաւ:

—Ես սանդուխին գլուխէն կընդունիմ զինքը. դուն ալ պէտք եղած կերպով ներս կառնես.

—Հասկցանք.

—Անանկ մը ընելու է որ տղան հասկնայ թէ օր տեսած մարդիկ ենք մեք. անանկ չէ.

—Անանկ է.

—Քիպարութիւնը բարայով չառնուիր. (յանկարծ ժաւացոյցը նայելով). վառայ ժամը ութն է. հայտէ, շուտ, Մառին կանչէ. ուր է. չը հաղուեցաւ դեռ: Սպասուհին ուր է. ինչ պիտի ընենք չի գայ նէ.

—Հոգս, մեռնելու չեմ ետ, կեցիր Մառին կանչեմ: (պոռախով) Մառի, Մառի:

—Շատ մի՛ պուրար, դուրսէն չիմացուի:

—Ո՛վ պիտի իմանայ, մարդ չեկաւ դեռ: (պոռախով) Մառի, հայտէ:

Բ. ՏԵՍԱՐԸՆ

Նոյնն էր Մառի

Մառի. —Ինչ կայ, ինչո՞ւ կը պոռաք կոր: Ինչու իրար անցեր էք. տակաւին եկող զացող չկայ:

Բամ. —Սպասուհին ալ չեկաւ Մառի, վախճամ խայտառակ պիտի ըլլանք:

Տկն. (քարկոթեալով) —Պիտի գայ ըսի. այդքան կը վախնաս կոր նէ սպասուհի մը բռնէիր:

Մ. —Լաեցէք, մի՛ սկսիք նորէն:

Բ. —Կը լսես կոր մարդ ըրած ծանր խօսքերը:

Մ. —Դուն ալ յանցանք ունիս, մինչև հիմա ծառայ մը կրնայինք ունենալ:

Տ. —Հարկաւ մեղքացողը ո՛վ է. առտուընէ ի վեր նստած չունիմ. ամեն բան ձեռքովս մաքրեցի. մինակ անուշին թախըմը մինչև որ կարգի դրի նէ հոգիս բերանս եկաւ:

Բ. —Ի՞նչ մեծ բան ըրեր ես:

Տ. —Արծաթ գգալ մը անգամ չունինք, պէքեթաթ քովի կնկանը որ վեց հատ փոխ տուաւ:

Բ. —Նորէն սկսար, հա՛, նամքէօր կնիկ, մինչև որ սիրտս չհատցունեմ նէ բան մը չըլլար աս տանը մէջ. (ժառնացոյցը կը նայի)

Մ. —Ժամը քանին է, հայր:

Բ. —Քանին պիտի ըլլայ. ութը կանցնի կոր, ուր է նէ հիմա կուգայ. խայտառակ եղանք գնաց. պատիւս մէկ բարայի պիտի ըլլայ տղուն քով:

Մ. —Ինչո՞ւ. ի՞նչ կայ որ:

Բ. —Ինչ պիտի ըլլայ. սպասուհին չեկաւ. ո՛վ պիտի բանայ դուռը:

(Նայն միջոցին դուռը կը զարնուի եւ երեքը մէկէն իրարու կը նային, յանկարծակիի եկած):

Բ. —(Ցած ձայնով) Հիմա:

Տ. —Ի՞նչ ընենք:

Մ. —Տեսաք եղածը:

Բ. —Ո՛վ պիտի բանայ:

Տ. —Ձիտեմ:

Մ. —Տեղէս չեմ երեւար:

Բ. —Ես բանամ:

Տ. —Չըլլար. ինչ պիտի ըսէ տղան. թող Մառին բանայ:

Մ. —(Վօրը) Դուն ինչո՞ւ չես բանար կոր:

Բ. —(Կնոջը քեռեկն ֆաշեղով) Պախընա՛, ըլլալիք բան չէ. ասոնք սպասուհի չունին պիտի ըսէ տղան. Բայց վերջապէս բան մը ընելու է. փողոցը պիտի ձգենք տղան:

Մ. —Կեցիք. կամաց մը պատուհանը բանամ նայիմ:

Բ. —Ասդին եկուր աղջիկ. ադ ի՞նչ պայադի բան է:

Տ. —Ձի բանա՞նք դուռը հապա:

(Դուռը երկրորդ անգամ կը զարնուի)

Բ. —Խենդենալիք բան է. խայտառակ եղանք գնաց:

Տ. —Ձէ նէ ես երթամ բանամ:

Բ. —(Քեռեկն ֆաշեղով) Մերթար կըսեմ կոր. քեզ տեսնայ նէ ի՞նչ պիտի ըսէ տղան:

Մ. —Ո՛վ պիտի բանայ վերջապէս. աս ինչ խայտառակութիւն է:

Տ. —Հայտէ տուն դնա՛ բաց, Մառի. տանը աղջիկն ես, փեսո չունի:

Բ. —Հայտէ աղջիկս. եղաւ ըլլալիքը:

Մ. —Ձէք ամչնար կոր. սպասուհի պիտի կարծէ ինծի:

Տ. —Մառի, ետ կը դառնայ հիմայ տղան, խըսմէթդ ոտքիդ տակ մ'առնեք:

Մ. —Խըսմէթը ո՛րն է. չի սիրած մարդս պիտի առնեմ:

(Դուռը երրորդ անգամ կը զարնուի)

Բ. —Մառի, աղջիկս, գնա՛ բաց դուռը:

Մ. —Ձէ:

Բ. —Չհաւնիս նէ, չես առնեք. զօրով չէ՛ ետ:

Մ. —Անուշն ալ ես չեմ հրամցներ. գիտցած եղէք:

Տ. —Բէք աղէկ. հայտէ:

Մ. —Կեցի՛ր քիչ մը ինքզինքիս գամ:

(Դուռը չորրորդ անգամ կը զարնուի)

Բ. —Հիմա խենդենամ պիտի. (քարկացած) քառա դուռը չբանաք. լկրտածներ. խե՞նդ էք, ի՞նչ էք...:

Տ. —Ինչ կը պոռաս կոր, ճանրմ, դուրսէն պիտի իմանան ձայնդ:

Մ. —Մեղի ըսելուդ, դուն գնա բաց:

Բ. —Հայտէ, օաքդ պագնեմ զաւակս. մի կոտրեր սիրտս:

Տ. —Սուրաթդ սիրեմ, հայտէ:

Մ. —Շատ աղէկ. (Կը կենաց)

Բ. —Ինչու չես երթար, բան մը պիտի բռնես նորէն:

Մ. —Դուռը չբացած պատուհանէն պիտի նայիմ:


Բ. —(Ճարախաւ) Աստուծո՛ւմէ գտնաս, անանկ թող ըլլայ:

Տ. —Կամաց բաց գոնէ:

(Ու մինչդեռ էրիկ կնիկ սենեկին մէջտեղ կեցած իրարու կը նային տխուր տխուր, Մառի կը մօտենայ պատուհանին ու համաց մը զայն բանալով դուրս կը նայի, յետոյ ետ բաշուելով, ապուշ կտրած՝ կը ծանուցանէ)

Մ. —Մանի՛կն է եղեր... սպասուհին...

(Վարագոյր)



Հայր և որդի .

—Տեսա՞ր տղաւ, խելօք կենալուդ համար ժամկոչ աղբարը պղտիկ եղբայր մըն ալ բերաւ քեզի .

—Օհ, ի՞նչ ալէկ, հայրիկ, ուրեմն ամեն օր խելօք կենամ .

—Ձէ դաւակա, չէ, ամեն օր չէ .

Այցեկութեան միջոցին օրիորդ մը .

—Հիմակուան ժամանակս ալ բոլոր չէնք շնորհք մարդիկը ամուսնացած են .

Տարէց կին մը . —Կը սխալիք օրիորդ, շընորհքով տեսած մարդիկդ տմենքն ալ ժամանակին անանկ չէին, հետզհետէ շնորհքի մտած են .

Գեղանի օրիորդ մը Բարիզի մէջ երիտասարդ փառաբանի մը գրասենեակը կը մտնէ և կարճ խորհրդակցութենէ մը վերջ կը հարցնէ .

—Ի՞նչ կը պարտիմ ձեզ այս խորհրդակցութեան համար .

—Համբոյր մը միայն, օրիորդ .

—Շատ լաւ պարոն, (ու մեծ մօրը դառնալով) մեծ մայրիկ, վճարէ՛ պարոնին պահանջած վարձքը .

Հարուստի մը զաւակը Բարիզ գացած էր իրաւաբանութիւն սովորելու . հոն գերասանուհիի մը հետ սիրահարելով անոր հետ կը կենակցի . հայրը իմանալով կը գրէ տղուն .

«Եթէ չի ձգես այդ կնիկը՝ ամսականդ պիտի կտրեմ» .

Տղան կը պատասխանէ .

«Եթէ ամսականս չի կրկնապատկես, կամուսնանամ իրեն հետ» .

—Ո՛հ օրիորդ, երէկ գիշեր երազիս մէջ

ձեռքդ կը խնդրէի, արդեօք ի՞նչ է այս երազիս մեկնութիւնը .

—Այդ երազիդ մեկնութիւնը սա է որ դուք քնացած ատեննիդ աւելի խոհական էք քան արթուն եղած ատեննիդ .

Երկու երիտասարդներ .

—Իմացայ օր հօրեղբայրդ հաղար ոսկիի կալուած թողուցած է .

—Ճշմարիտ է .

—Շիտակը շատ զարմացայ, ինքը որ այնչափ կծծի էր, ի՞նչպէս ըրաւ այդ բանը .

—Բայց իր ուղեւովը ըրած չէ .

—Ձեմ հասկնար .

—Այսինքն հետը չի կրնալ տանելուն համար թողուցած է .

Թուաբանութեան դասատուն .

—Ըսէ՛ տեսնեմ Արամ, եթէ մայրիկդ մէկ օխա միսը ութը կտոր ընէ, ամեն մէկ կտորը որչափ կըլլայ .

—Մէկ ութերորդ օխա .

—Լաւ, իսկ եթէ 16 կտոր ընէ .

—Մէկ տասն և վեցերորդ .

—Իսկ եթէ այդ 16 կտորներն ալ վեց վեց կտոր ճարդէ, ի՞նչ կըլլայ .

—Աղւոր քաւ ֆեպպի մը կըլլայ միւսիւ .

Մայր մը իր պղտիկ տղուն .

—Սեփոնիկ, դպրոց կերթամ շատ մը բան կը սորվիմ կոր կըսես, քեզի թուաբանական պղտիկ խնդիր մը պիտի ըսեմ .

—Ի՞նչ խնդիր .

—Հայրիկդ 80 զրշ մսավաճառին, 70 զրշ հացագործին և 30 զրշ կաթավաճառին պարտկան է, ընդ ամենը քանի՞ զրշ պիտի վճարէ .

—Ոչինչ .

—Շատ կը զարմանամ որ գումար մը ընել չես դիտեր .

—Ես ալ կը զարմանամ որ հօրս ի՞նչ մարդըլլալը չես դիտեր .

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (23)

ՌԸՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԸ)



—Առջի օրն ուր որ էի գրեթէ հոն եմ: Ի զօր ճամբայ հանեցի քո—Հօբ պաշտօնակցիս ամենէն սրտ-միտ գործակալները: Կարծես այդ անպիտանները հա-ճոյք կը գդան որ հս ընդունիմ. . . : Ամենեւնի բան մը երևան չեն հաներ: Ես անձամբ այցելեցի բոլոր բան-տերը, հարիւր բանտարկեալ հարցափորձեցի, բոսն հա-տի չափ գանակոծել տուի: Ոչինչ:

—Քննութիւն մը ըրի՞ք ի ֆուն-Սի, տիկին Լիուի գրացիներուն տունները:

—Այո՛, բայց դժբախտաբար իր աղախինը առե-ւանգուեր է, և հարցափորձած մարդիկներս մեծ բան մը չիմացուցին ինծի: Եթէ օգնութեան չհասնիք ինծի, կոր-տուած եմ:

—Օ՛հ, դեռ ոչ: Խնդիրն ամփոփենք: Նախ, Վար-դի առեւանգիչներուն ով ըլլալն յայտնուած է: Բնաւ ու է նշան չէ՞ գտնուած:

—Ոչ: Ա՛հ, այո՛, գետեզրին վրայ, այն տեղն ուս-կից մակոյկ մը կը պահէր զոր աւազակները գողցած ըլլալու են փոխչեղու համար, նաւազի գլխարկ մըն է գտնուած:

—Չինակա՞ն թէ Եւրոպական:

—Չինական, ձկնորսներուն դրած գլխարկին պէս, զոր կը գործածեն նաև Լանտրոն կղզիներուն ձեր բարե-կամ ծովահէնները:

—Բայց հետք մըն է ատիկա, վասն զի եթէ ի-րաւ ծովահէններն են տիկին Լիուի աղախինն առեւան-գողները, գրեթէ կրնայ ենթադրուիլ որ անոնցմէ մէկն է Լէնկ-Թաւանկի սպանիչը:

—Արդարեւ կրնայ ըլլալ:

—Յայտնի է որ այդ դժբախտ երիտասարդը ըս-պաննուած է նախանձտի մը: Գեղեցիկ Սօլ-Պրօտէէն վաճառուած սիրահարի մը կողմէ:

—Տիկին Լիու ոչ որ կընդունէր, բացի իր եղբոր-որդիէն: Ինք է ըսողը:

—Իմ ըսած ռիւհարս տեսած է գայն մեհեանը, զբօսատեղին կամ պատուհանը:

—Սօլ-Պրօտէ գրեթէ երբեք դուրս չէր ելլար, և զիմացի տունն ալ մօտ երկու ամսէ ի վեր անբնակ է:

—Ո՞վ կը բնակէր հոն:

—Մտաւաճառ մը որ կերեւայ թէ աշխարհի առե-նէն այլանդակ մարդն էր: Առտու մը յանկարծ անհետ եղաւ: Այն օրուէն ի վեր, բնաւ անոր վրայ չի խօ-սուեցաւ:

—Անո՞նք ինչ էր:

—Չու: Ստամբուլները կարմիր-Մամուկ կոչած էին գայն: Խանութիւն փեղկերուն վրայ խոշոր մամուկ մը շիներ են ի յիշատակ անոր:

—Արդեօք տիկին Լիուի աղախինն այդ մտաւաճա-ռէն առուտուր կրնէր:

—Հաւանական է, ինչպէս թաղին միւս բոլոր ըս-պասուհիները:

—Եւ այդ Չուն բարձրահասակ էր թէ փոքրա-հասակ, զօրաւոր թէ տկար:

—Բնաւ չեմ գիտեր: Ինչո՞ւ այդ բաներով ըզ-բաղիմ:

—Ինչո՞ւ: Ա՛հ, իմ խեղճ նախագահս, որչափ տխուր ուստիկան մըն էք: Գիտէք որ Լէնկի պարտեզին մէջ երեւան հանուած քայլի հետքերը ծանր և բարձ-րահասակ մարդու մը հետքերն են: Թէ ամուսնական սենեկին անկողնոյն բարձերէն մէկուն վրայ գտնուած արիւնոտ դրոշմը մեծ ձեռքէ մը դուրս ելած է. թէ մարդասպանը հօժկու մարդ մը ըլլալու է, քանի որ յոյժ հաւանաբար խղճած է իր զոհը, և գայն ապա-հովապէս փոխադրեր է ծառուղիէն այն թուփն ուր իր դիակը գտնուեցաւ, և դուք բնաւ փոյթ չէք ըներ գիտ-նալ թէ մտաւաճառ մը որ Սօլ-Պրօտէին դիմացը կը բնակէր և որուն վիճակն անձանթ էր, փոքրահասակ էր թէ երկայնահասակ, զօրաւոր էր թէ տկար:

—Բայց բանի որ ոճրի միջոցին արդէն երկար ատե-նէ ի վեր մեկնած էր: Կը կարծէք որ...

—Ես բնաւ չեմ կարծեր: Ելլ կը մտածեմ որ մէկ կողմէ մարդասպան մը կայ որ չի գտնուիր, միւս կողմէ գրացի մը որ խոյս տուած է, և թէ այս բան խորհրդածութեան արժանի է:

—Այդ Չուն ի՞նչ տեսակ մարդ էր:

—Այլանդակ արարած մը, երբեմն թոչնոյ, բոյնի պէս ուրախ, և իր յաճախորդուհիներուն հետ զուար-ճացող, երբեմն տխուր և վայրագ:

—Իաւ ուրեմն, իմ բաջ Մէնկս, բան մը կըսէ ինծի թէ Պաթէօն-տՕո փողոցին այդ փախստականը ձեր կարծածին չափ անգիտակ չէ տիկին Լիու-Սիուի ա-մուսնոյն սպանմանը:

—Ի՞նչ կըսէք:

—Կը յիշէք թէ Լէնկ-Թաւանկ թանձր և երկ-

սայրի զէնքով մը զարնուեցաւ: Մտաւաճառի դանակ մը չէ՞ր կրնար ըլլալ: Ասկից գատ, Չու ֆուլն—Սիէն հետեցաւ երբ իր դրացուհիին ամուսնութիւնը պիտի հրապարակուէր: Ով գիտէ թէ շատ հետուս գացած է եւ թէ պարզապէս շրջակաները պահուրտած չէ նպաստաւոր վայրկենին նպասելով:

—Երբեք միտքէս չէին անցնիր տոնը:

—Ես կը հետեւցունեմ որ եթէ ապացոյց ունենայինք թէ ձկնորսներ աւելանալով են Վարդը, մարդասպանին ծածուկով վրայ պիտի գտնուէինք: Ուրեմն չի՞ կրնար ըլլալ որ քիչ մը առաջ Բէյ—Հօի գիտէր քնած տոնենիք նոյն իսկ ձեզ ծառայած ըլլաք բան մեզի:

—Ա՛հ, բնաւ խելքս չի հասնիր այս բաններուն:

—Եթէ չեմ սխալիր, շուտով պիտի հասկնարք բայց ասոր համար պէտք է որ վաղը չէ միւս օր Հօնի—Քոնկ գար:

—Ծովահաններուն կախման օրը:

—Ընչո՞ւչա: Չեր ներկայութիւնը գաղթականութեան մէջ շատ բնական պիտի երևայ: Ընդունեցէք իմ ճաշի հրաւերս: Թերեւս մինչեւ այն ատենը ձեզ համար հետաքրքրաշարժ բան մը իմացած կ'ըլլամ:

Խօսակցելով հանդերձ, երկու բարեկամները անգլիական գործակալատունը դարձած էին, ուր Մէնկին գահաւորակիրները դսնէն դուրս անոր կը սպասէին:

—Օ՛ն, որոշուեցաւ, վաղը չէ միւս առտու, հառաչեց մանտարէնը ոտքի հարուածներով արթնցնելով իր ծառաները, բայց հաւատացէք որ ձեր ծրագիրին մէկ կէտն իսկ չեմ հասկնար:

Եւ ծանրօրէն փոփոխեցաւ իր գահաւորակին մէջ, ամեն բանի համակերպող մարդու մը պէս:

Բերքինս, ա՛լ առանց զբաղելու մարդուկով, ցատկեց գործակալատան դռնէն մինչեւ այն յարկարաժինն ուր կը բնակէր սըր Արթուր Մըրրէյին հետ երբ քանդոն գտնուէին, այսինքն ամեն երեք ամիսն անգամ մը, բնան օրի չափ:

—Ի՞նչ լուր, հարցուց իր հայրենակիցը, որ անոր դարձէն առաջ չէր ուզած պատկիլ:

—Եղա՛ւ, պատասխանեց նաւապետը զուարթօրէն: Մէնկ շատ արժանաւոր եւ գրեթէ խելացի վարժուող ունեցաւ:

—Ուրեմն մեզի՞ պիտի յանձնեն Բէյ—Հօի մարմինը:

—Կախողանէն հանուելուն պէս, այսինքն կախուելէն կէս ժամու չափ ետքը:

—Կեցցե՛ս: Հոնկ—Բենկէն կուգամ, ուր տեսայ իմ հին բարեկամս, տոքթոր Բլիֆթընը: Ամեն ուղածնիս

պիտի ընէ: Գործին մէջ պիտի տեսնէք զինքը: Իսկ Բէյ—Հօին վրայ ի՞նչ կարծիք ունիք: Շատ սուղի նստեցա՛ւ ձեզ:


—Բէ՛հ, շատ աժան, կախուելէն առաջ բառսուն զրուշ, ետքն ալ հարիւր զրուշ:

—Ոչի՛նչ բան:

—Մանաւանդ որ հինգ օտք ութը մատնաչափ հասակով խոշոր սրիկայ մըն է, որ տանջուելու պիտի երթայ օրհնելով իր վեհապետը, իր գլուխը կտրել չը տալուն:

—Ուրեմն ամեն բան կարգին է: Տիտոսին պէս կրնանք ըսել թէ օրերնիս պարապ չ'անցուցինք:

Եւ այս փիլիսոփայական խորհրդածութեան վերայ, որ կարծենք շատ նպաստաւոր չէր հոմայեցի կայսեր համար, վասն զի չէր յիշեր որ Անպատիանոսին անգրանիկ զուակը կախուած մարդեր գնած ըլլայ երբեք, Բերքինս բարի գիշեր մաղթեց սըր Արթուրին և իր ննջարանը բաշուեցաւ, ուր անմիջապէս քնացաւ, ալ առանց մտածելու խեղճ Մէնկին վրայ, որ սակայն, ինչպէս գիտենք, իր բոլոր յոյսը մաքսախոյս բարեկամին վրայ էր դրած: (Շարունակելի)



Աւասիկ գիշերին, բայց ուր են խմորները.